



ՅԻՆ ՀԱՅԿԱԶՅԱՆ ԲԱՌԱՐԱՆԸ ԵՎ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Վ. Զ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Բառարանագրությունը լեզվաբանության հնագույն ճյուղերից մեկն է: Իսկ եթե նկատի առնվեն Հին Արևելքի որոշ երկրներում դժվարություն ներկայացնող բառերի (այսպես կոչված գլոսսաների¹) բացատրության ցանկերը, ապա կարելի է վստահորեն ասել, որ բառարանագրությունը լեզվաբանության ամենից հին ճյուղն է, և որ լեզվաբանությունը, նախ, ձևավորվել է իբրև կիրառական գիտություն, ապա միայն անցել տեսական հարցադրումների, այն էլ՝ հիմնականում փիլիսոփայական հիմնահարցերի արծարծման համատեքստում²:

Բառարանագրությունը նաև հայերենագիտության հին ճյուղերից մեկն է: Ինչպես ցույց են տվել ուսումնասիրողները, բառարանագրական բնույթի առաջին աշխատանքները մեզանում ի հայտ են եկել դեռևս գրաբարի՝ որպես բանավոր լեզվի գործառության ուշ շրջանում (X-XII դդ.), որպիսիք են՝ «Բառք քերականին», «Հանդես բանաստեղծաց», «Բառք քերթողական», ինչպես նաև Գ. Ե. Նարեկացու «Ողբերգության մատյանին» կցված բառարանագրական աշխատանքները, որոնք, պրոֆ. Ռ. Ղազարյանի բնութագրմամբ, հիշեցնում էին «այժմյան բառարանների զանազան տիպերը»³:

Միջին հայերենի շրջանում ևս ստեղծվում են տարբեր բնույթի բառարաններ, սակայն հայկական բառարանագրությունը զարգացման լուրջ խթան է ստանում միայն տպագրության գյուտից հետո և մասնավորապես՝ 18-րդ դարի սկզբներից՝ կապված Մխիթարյան միաբանության ձևավորման հետ՝ 1701թ.: Թեպետ միաբանությունը հոգևոր կազմակերպություն էր, այն էլ՝ կաթոլիկական դավանանքի հետևորդ կառույց, բայցևայնպես ի սկզբանե նրա հիմնադրի՝ Մխիթար Սեբաստացու և վերջինիս աշակերտների հիմնական առաքելությունը եղել է հայագիտությանը և հայ մշակույթի զարգացմանը ծառայելը, ինչը և նրանք իրականացրել են անկաշառ մվիրումով, նախանձելի ջերմեռանդությամբ և ժամանակի գիտական բարձր չափանիշներով: Հայ ժողովրդի համար չափազանց աննպաստ մի

¹ Հուն. glossa - լեզու, խոսք բառից. գլոսսաների բառացանկերը կոչվում են գլոսսարիաներ:

² Վ. Գ. Գալեր բառարանագրության պատմությունը բաժանում է 3 փուլի, 1) Նախաբառարանագրային փուլ, որն ընդգրկում է բառարանագրական վաղ փորձերից (մ.թ.ա. 25-րդ դարից՝ շումերների մոտ, 20-րդ դարից՝ չինացիների մոտ) մինչև մեր թվագրության սկիզբը, 2) Վաղ բառարանագրության փուլ. այս շրջանին են վերաբերում, օրինակ, սանսկրիտի միայնակվյան բառարանը (лексикон)՝ 6-8-րդ դդ. և ռուսերեն-լատիներեն-հունարեն բառարանը՝ 18-րդ դ, 3) Զարգացած բառարանագրության փուլ, որի սկզբնավորման շրջան համարվում է 18-րդ դարը, բայց բառարանագրական այդ որակին է դասվում նաև Կուրսկի ակադեմիայի իտալերեն բառարանը (1612 թ.), (տե՛ս **В. Г. Гак**, «Лексикография». Лингвистический энциклопедический словарь, М., «СЭ», 1990, էջ 258): Այդ մասին տե՛ս նաև **Պ. Բ. Ջահուկյան**, Լեզվաբանության պատմություն, հ.1, Եր., 1960, էջ 12-19:

³ Տե՛ս **Ռ. Ս. Ղազարյան**, Էջեր հայ բառարանագրության պատմությունից, Եր., 2002, էջ 3-8, ինչպես նաև՝ **Պ. Կ. Գասպարյան**, Հայ բառարանագրության պատմություն, Եր., 1968, էջ 13-45, **Հ. Ամալյան**, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները, Եր., 1966, էջ 20-24:

ժամանակաշրջանում, երբ հայության տարանաջատ զանգվածները ֆիզիկական գոյությունը պաշտպանելու տևական մաքառումների մեջ էին՝ այդ ճանապարհին առավելագույնս կառչելով ազգային ավանդույթներից և ազգային անշրջանցելի ուղենիչ համարվող հայ առաքելական եկեղեցուց, Մկրտչայի կենտրոնում՝ Վեներտիկի սրբ. Ղազար կղզում, 1717 թ. վերջնականապես հանգրվանած Մխիթարյան միաբանությունը՝ Աբբահոր գլխավորությամբ, ի շարս հոգևոր ու մտավոր այլ աշխատանքների, ձեռնամուխ է լինում հայոց լեզվի, մասնավորապես գրաբարի ուսումնասիրության, այն օտարաբանություններից մաքրելու և անխաթար կերպով ներկայացնելու բարդ ու շնորհակալ գործին: Այդ նպատակով Սեբաստացին գրում է իր «Քերականութիւն գրաբառ լեզուի հայկազեան սեռի» (1730 թ.) աշխատությունը, որն արդեն իսկ առաջընթաց էր նշված առումով, քանզի հեղինակը զգուշությամբ փորձ է արել գրաբար լեզուն մաքրել լատինաբան հեղինակների կողմից պարտադրված խորթ ու արհեստական ձևերից, կազմություններից:

Այդ խնդիրը նա հիմնավորապես լուծում է իր գրական և գիտական գործունեության զլոխգործոցը համարվող «Բառգիրք Հայկազեան լեզուի» երկհատոր (1749-1769 թթ.) բառարանագրական հուշարձանով⁴:

Այդ մեծարժեք աշխատությունը, որ հետագա ուսումնասիրողների ու հեղինակների կողմից ստացավ Հին հայկազյան բառարան (ՀՀԲ) անվանումը Նոր հայկազյան բառարանից (ՆՀԲ) տարբերելու նպատակով, անմախաղեպ երևույթ էր ոչ միայն հայ բառարանագրության զարգացման ճանապարհին, այլև առհասարակ հայերենագիտության պատմության մեջ: Ուրպես կանոն, նմանօրինակ մեծարժեք գործերը բարձրանում են որոշակի պարարտ հիմքի վրա և իրենց բերած նորությամբ հանդերձ՝ մեկ նախընթաց շրջանում կատարված աշխատանքի ամփոփումն են: Սակայն Հին հայկազյան բառարանի նկատմամբ այդ դրույթները կարելի է կիրառել խիստ վերապահումով, այն էլ մախորդ շրջանի հեղինակների աշխատանքը չանտեսելու համար: Այս առումով ուշագրավ է հենց Աբբահոր դիտողությունը, ըստ որի՝ իր ժամանակներում գրվածները կամ լատիններենից հայերեն բառարաններ էին, «կամ ոճ արտադրութեան նորա մեզ անյաջող, վասն որոյ եւ ոչ եղաք հետամուտ ունիլ գնա եւ ոչ իսկ տեսաք զնոյն: Իսկ փոքր բառգիրքն հայկական (իմա՝ Ե. Մեղրեցու «Բառգիրք հայոց»-ը - Վ. Պ.) գրեալ միաբառ մեկնութեամբ իբր ոչինչ օգտեաց մեզ», որովհետև նախ՝ այնքան աղքատ է բառերով, որ

⁴ «Բառգրքի» առաջին հատորը լույս է տեսել 1749 թ. մայիսի 19-ին՝ հեղինակի մահից 22 օր հետո: Մահվան մահճում Սեբաստացին իր աշակերտներին, որոնց գործակցությամբ պատրաստվել էր բառարանը, թելադրում է «Բառգրքի» առաջաբանը, ուր ոչ միայն շարադրված են բառարանագրության մասին Մխիթար Աբբայի պատկերացումները, այլև լեզվական ու լեզվագիտական հարցերի լայն շրջանակ: Սեբաստացու մահվանից քսան տարի անց նրա աշակերտները հրատարակում են «Բառգրքի» երկրորդ հատորը, որն, ըստ էության, կազմված է չորս ինքնուրույն բառարաններից. 1) Մնացորդք գրաբառ բառից Հայկազեան լեզուի, համառոտ մեկնութեամբ (հեղինակ՝ Սիմեոն Աստվածատրյան), 2. ա) Բառարան յատուկ անուանց Աստուածաշունչ գրոց հին և նոր կտակարանաց (հեղ.՝ Ջաքարիա Ալեքսանյան), 2. բ) Բառարան յատուկ անուանաց, որք գտանին յայլ և այլ գիրս արտադոյ Աստուածաշունչ գրոց (հեղ.՝ Իգնատիոս Խաչատրյան), 3) Բառգիրք ի գրաբառէ յաշխարհաբառն (հեղինակներ՝ Սիմեոն Աստվածատրյան, Իգնատիոս Խաչատրյան, Ջաքարիա Ալեքսանյան և ուրիշներ), 4) Բառգիրք յաշխարհաբարէ ի գրաբառն (հեղինակներ՝ Սյրտիչ Անանյանց, Ստեփան Ասլիկյան): Դժվար է ասել, թե նշված բառարանների աշխատանքի որ մասն է պատկանում Աբբահորը, քայքայ այն փաստը, որ նրա աշակերտները նշված բառարանները հրատարակել են իբրև «Բառգրքի» 2-րդ հատոր, վկայում է, որ առնվազն այդպիսի բառարանների զաղափարը, ինչու չէ՝ մեկ որոշ աշխատանքների հեղինակը հենց Սեբաստացին է: Իհարկե, չպետք է քսցառել մեկ Աբբահոր անձի նկատմամբ աշակերտների տածած մեծ համակրանքի գործոնը:

անհրաժեշտ հարյուր բառից հազիվ մեկն է գտնվում, ապա այնքան խրթին է բացատրված, որ մեկնեյի բառն ավելի հասկանալի է, քան մեկնությունը: Ավելին, ՀՀԲ-ը, մասնավորապես՝ նրա առաջին գիրքը, ոչ միայն մեծ սկիզբ է հայ բառարանագրության ճանապարհին, այլև հինք ու խթան է հետագա տարբեր բնույթի բառարանների, այդ թվում՝ մեծարժեք բառարանագրական աշխատանքների համար:

ՀՀԲ-ի առաջին բանալին նրա նշանավոր «Առաջաբանն» է, որը ևս, ինչպես և ողջ բառարանը, խորաթափանց մտքի արգասիք է և արտահայտում է իր ժամանակի գիտական մտքի մակարդակը եվրոպական չափանիշով, ընդ որում՝ ոչ միայն բառարանագրության ոլորտում: Սա մի կարևոր հանգամանք է, որը հետագայում բնութագրական է դառնում Մխիթարյան երկու կենտրոնների՝ Վենետիկի և Վիեննայի գիտնական հայրերի ստեղծած տարաբնույթ (քերականագիտական, պատմագիտական, բառարանագրական, ինչպես նաև գեղարվեստական) երկերի համար, որպիսիք են, օրինակ, եռահեղինակ Նոր հայկազյան բառարանը («Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», 1836-37 թթ.), Մ. Չամչյանի եռահատոր «Պատմություն հայոց» (1784 թ.), Ա. Այտընյանի «Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի» (1866 թ.) աշխատությունները:

«Բառգրքի» առաջին հատորը գրաբարի բացատրական և ձևակազմական, մասամբ նաև ստուգաբանական, երկլեզվյան և հոմանիշների բառարան է: Ներառում է շուրջ 37000 բառահոդված, որոնց գլխաբառերի ընտրությունը Սեբաստացին կատարել է բծախնդիր մոտեցումով. իր բառարանի համար նա բառեր ընտրել է Գր. Լուսավորչից, Սահակ Պարթևից, Մեսրոպ Մաշտոցից, Ազաթանգեղոսից, Մ. Խորենացուց, Գր. Նարեկացուց, Ն. Շնորհալուց, Ն. Լամբրոնացուց, ինչպես նաև Աստվածաշունչ մատյանի հայերեն թարգմանությունից, որը համարում է ոչ միայն «զանձ բարբառոյ հայկական լեզուի», այլև «ովկիանոս գերապանձ բառից յեռելոյ յոսկեպաճոյն թարգմանութիւն աստուածահրաշ պատգամաց»: Այլ մոտեցմամբ, անշուշտ, բառարանը կարող էր ավելի շատ բառամթերք ներառել, այդ դեպքում, սակայն, մեծ կլիներ գրաբարյան բառազանձի տեսանկյունից վիճահարույց բառերի թիվը: Արդյունքում աշխատությունը կլիներ «ոչ թե բառգիրք, այլ չարգիրք», իսկ հեղինակը՝ «անագորոյն աղճատիչ լեզուիս, քան պաշտպանիչ»⁵: Բառամթերքի ընտրության այս քննական եղանակը, ըստ էության, բառարանագրական աշխատանքի գիտական չափանիշներից մեկն է, որը պարզապես բացակայել է նախորդ շրջանի բառարաններում, այդ թվում՝ Երեմիա Մեղրեցու անունով հայտնի բառարանում, որը եղել է գրաբարի թերևս ամենից հեղինակավոր բառարանը՝ ՀՀԲ-ին նախորդող շրջանում⁶:

Իսկ ինչ սկզբունքներ ու չափանիշներ են առաջադրվել ՀՀԲ-ում, որոնք ավանդույթի ուժ են ստացել հետագա բառարանագիրների կողմից:

1) ՀՀԲ-ն նորմատիվ բառարան է. նրա հեղինակն ընդգծում է բառարանի ուղղորդիչ ուժը՝ որպես «քանուն ուղղութեան դպրութեան պարապելոց».

⁵ Տե՛ս Մխիթար Սեբաստացի, Բառգիրք Հայկազեան լեզուի, Վենետիկ, հ.1, 1749, Առաջաբան, էջ 9 (այսուհետ՝ ՀՀԲ):

⁶ Մեղրեցու բառարանը «Բառգիրք Հայոց» անվանումով առաջին անգամ հրատարակվել է 1698թ. Ալիկոնիայում: Այս բառարանի հեղինակային պատկանելության հարցը կասկածի են ենթարկում հայ բառարանագրության գիտակները՝ նշելով, թե այն, ամենայն հավանականությամբ, «Բառք քերթողականի» ընդարձակ գրչագրերից մեկն է (տե՛ս Ռ. Ս. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 21, Գ. Կ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 68): Այս առումով ուշագրավ է, մասնավորապես, Ռ. Ս. Ղազարյանի կատարած համեմատությունը «Բառք քերթողականի»՝ Մատենադարանում պահվող 3 գրչագրերի և Ե. Մեղրեցու անունով հրատարակված «Բառգիրք Հայոցի»՝ «Ռ» տառով սկսվող 38 գլխաբառերի (բառահոդվածների) միջև (տե՛ս նշվ. աշխ., էջ 14-21):

հանրության համար լեզուն «նոյնկերպ վարելու» ուղենիշ պիտի լինի, որպեսզի գրաբարը չմամսվի աշխարհաբար լեզվին, որը տեղից տեղ տարբերվում է իր «զխուժ և գոտժ» բնույթով՝ *գայլին* ասելով *գայ, գառանը՝ գոթ, հացին՝ հոց* ևն: Ի դեպ, հենց միասնական աշխարհաբար լեզվի բացակայության պատճառով է Սեբաստացին իր բառարանը գրում գրաբարով, որովհետև վերջինն «ընդհանրական» է և մեծամասնության համար հասկանալի: Առանձին դեպքերում է բառի բացատրությունը տալիս «ոամկական» համարժեքով կամ թուրքերենով (ըստ Սեբաստացու՝ տանկերենով)՝ այդ լեզվին տիրապետողների համար բառիմաստն ավելի մատչելի դարձնելու նպատակով:

2) Կարևորվում է գլխաբառի իմաստի (իմաստների) հնարավորինս ամբողջական և պարզ բացատրությունը. այդ չափանիշը հաճախ թելադրում է գլխաբառը բացատրել ավելի շատ բառերով ու արտահայտություններով, քանզի ոչ միշտ է հնարավոր մեկ բառով բացատրել. «և թեև բացատրեսցին, բայց ոչ ըստ պատշաճաւոր պարագայից»⁷: Իսկ կենդանիների, ծառերի, ակնեղենի, դրամի և մմանների բացատրությունը տրվում է հատկանիշների նկարագրությամբ, օրինակ՝

բազէ կմ բազայ. գէի, իւ, ից, իւք: //թռչուն մեծ և ճիրանավոր՝ ունօղ զփետուրս խայտախարիս. և է որսորդ. և յափշտակօղ: ռամկօրէմ կոչի *փողան* կամ *շահրն:* Ղատ. 4. 7: և 3 օր. 39, 26:

3) Բառարանը պիտի արտացոլի լեզվի բառապաշարի ամբողջականությունը: Այդ նպատակով «Բառագրքում» տեղ են գտել և բացատրվել բազմաթիվ պարզ, հանրամատչելի բառեր, ինչպես՝ *ազապ, կաւ, հաց, մարդ, հերիք* ևն: Իհարկե, այդ կարգի բառերի առկայությունը բառարանում այլ պատճառներ ևս ունի, ինչպես՝

ա) շեշտել նրանց գրաբարյան պատկանելությունը. բ) տեղեկություններ տալ քերականական վերջավորությունների մասին, գ) «տգետ» կամ այլազգի մեկին, որ հայերեն չգիտի, օգնել բառարանի միջոցով սովորելու լեզուն:

4) Բառարանագրության կարևորագույն պայմաններից է համարվում բառիմաստների ճշգրիտ բացատրությունն ու ստուգաբանությունը: Դրա համար անհրաժեշտ է, որ բառարանագիրն ունենա համակողմանի գիտելիքներ, լավագույնս իմանա ոչ միայն սեփական լեզուն, այլև տեղյակ լինի ուրիշ լեզուների, ինչպիսիք են լատիներենը, հունարենը, արաբերենը, պարսկերենը, մարերենը, քաղդերենը ևն, խորամուխ լինի բառիմաստների զանազանմանը, որպեսզի հոմանիշ և «զծորդածայն» (իմա՝ հարանուն-Վ.Պ.) բառերը, ինչպես՝ *թրեկ, թրակ, թրծեկ*, չփոթի իրար հետ: Ինքը և աշակերտները խստորեն հետևել են այդ պահանջներին, որպեսզի «միգուցէ կարծեօք մեկնելով զբառս ինչ՝ վրիպիցիմք ի բուն նշանակութենէն և լինիցիմք այլոց քար գայթակղութեան և խանգարիչ լեզուի»: Այդ առումով մա առաջադրում է «...*յալ է սակաւն սքուգութեանք, քան զբազումն երկբայութեանք*» միտքը, որ, հիրավի, կարգախոսային նշանակություն ունի և ունեցել է բոլոր

⁷ Ուշագրավ է, որ գլխաբառի՝ բազմաբառ (և ոչ թե մեկ հոմանիշ համարժեքով) բացատրության այս մոտեցումը, որ ըստ անհրաժեշտության կիրառել է Սեբաստացին, նրանից մոտ երկու հարյուր տարի հետո ոռւս լեզվաբան Լ. Վ. Շչերբան նախընտրելի է համարում նույնիսկ թարգմանական բառարանների համար: Նա առաջարկում է կազմել ոչ թե պարզապես թարգմանական, այլ բացատրական-թարգմանական բառարաններ, որովհետև հաճախ թարգմանող լեզվի բառային «համարժեքը» ամբողջությամբ չի արտահայտում թարգմանվող լեզվի համապատասխան բառի իմաստները, կամ տարբեր են լինում համապատասխան գույգերի զործառական ոլորտները: Իր խոսքը Շչերբան հաստատում է մի կողմից՝ ֆրանսերենի և գերմաներենի, մյուս կողմից՝ ռուսերենի համապատասխան բառերի բազում օրինակներով (տե՛ս **Մ. Վ. Շչերբա**, *Избранные работы по языкознанию и фонетике*, т. 1, М., 1958, էջ 86-88): Ըստ էության Սեբաստացին այդ տեսակետը կյանքի է կոչել շատ ավելի վաղ:

մեծարժեք աշխատությունների, ինչպես, օրինակ, Նոր Հայկազայան բառարանի հեղինակների համար: Ուստի պատահական չէ Սեբաստացու վերոհիշյալ մտքի ուղղակի արձագանքը ՆՀԲ-ի առաջաբանում. «Մինչև զայն ևս աչօք բացօք տեսանել, գոր ամենայն բառագնիք լինին խոստովան, թե ոչ որ քաջիկ իմանայ զիսկութիւն բնիկ լեզուի իւրոյ, եթէ չիցէ խելամուտ՝ գեթ փոքր ի շատէ՝ և այլոց լեզուաց, մանաւանդ, առինչունակ, [=առնչություն ունեցող- Վ.Պ.] երևելոց, որպիսի են, ի պէտս մեր պարսկականն և մարն՝ սահմանակիցք յարևելից կողմանէ, ասորիք այլովքն հանդերձ ի հարաւոյ կուտէ, ևս առաւել յունականն յարևմտից կողմանէ. յոր քաջակիրք նախնիք մեր՝ ի փոխ առին անտի գազգի ազգի ոճս բանից և բաղադրութեան բառից կամաւ և ի հարկէ, այլ և ոմանք իսպառ հելլենացան յիմաստասիրական ձայնս, զորս այլք վայելչական հայկաբանութեամբ, յերիւրեցին»* [=կարգավորեցին - Վ.Պ.]:

5) Բառամթերքի դասակարգման հարցում կիրառվել է բառերի դասավորության այբբենական հաջորդականության սկզբունքը և ոչ թե բնային, որը նշանակում է, որ հաճախ բուն բառից կամ արմատից բաղադրվածները բառարանում կարող են ավելի առաջ լինել, քան տվյալ բառը կամ արմատը, ինչպես՝ *արքափայլ*, *արքաբնեհեզ*, ապա միայն *սուրբ*⁹: Բառարանագրության մեջ նշված սկզբունքի կիրառությունը կարող է համեմատվել Մաշտոցի կողմից գրության հնչյունական սկզբունքի կիրառման հետ, որովհետև ինչպես վերջինս էր անհամեմատ ոլորացնում գրային համակարգի կիրարկումը և լեզվի ուսուցումը, այնպես էլ այբբենական սկզբունքի գործադրումը մատչելի էր դարձնում բառարանից օգտվելը, եթե տվյալ անձնավորությունը գոնե փոքր չափով գիտի «զգրաբառ լեզուն», հակառակ դեպքում «ոչինչ շահի ի մատենէ աստի»:

Բառարանագրական նշված սկզբունքին են հետևել ինչպես ՆՀԲ-ի հեղինակները, այնպես էլ հետագա շրջանի, այդ թվում՝ մեր օրերի գրեթե բոլոր հայ բառարանագիրները՝ անկախ բառարանի տեսակից⁹:

* ՆՀԲ, հ. 1, Եր., 1979, էջ 7^ա:

⁹ Տես ՆՀԲ, էջ 17^ա:

¹⁰ Լ. Վ. Շչերբան, որին արդարացիորեն կարելի է համարել բառարանագրության խոշոր գիտակներից ու տեսաբաններից մեկը, տարբերակել է բառարանակազմության երեք հիմնական տեսակ՝ *ալֆաբետական* (алфавитный), *բնային* (гнездовой) և *քննադիկ* (идеологический), բառարանագրության խղեղ համարելով վերջին քննադիկ տեսակը: Այսպիսի բառարանների գլխաբառերը բառ-հասկացություններ (слова-понятия) են: Նա քննադիկ բառարանի մասնակի արտահայտություն է համարում հոմանիշների բառարանները, միաժամանակ ընդունելով, որ իսկական քննադիկ բառարաններ կազմելը քարդ գործ է. դրա համար, նախ, անհրաժեշտ են տվյալ լեզվի կատարյալ բացատրական և պատմական բառարաններ: Շչերբան քննադիկ բառարանի հաջողված մտուշ է համարում, օրինակ, Պիեռ Մարկ Ռոջեի «Thesaurus of English Word» կոչվող բառարանը, որ լույս է տեսել 1852թ. և մինչև 1940-ական թթ. վերահյատարակվել է 76 անգամ:

Ըստ էության Շչերբան նույն տեսակետը պաշտպանել է նաև իր ընդհանուր խրմբագրությամբ հրատարակված «Ռուս-ֆրանսերեն բառարանի» ութերորդ հրատարակության առաջաբանում (տես Русско-французский словарь, сост. акад. Л. В. Щерба и М. И. Матусевич, изд. восьмое, стереотипное, ГИИНС, М., 1962, էջ 4-7): Փաստորեն, բառարանագրության այս տեսակը ժամանակագրորեն հաջորդում է ՀՀԲ-ին, հետևաբար, այդպիսի բառարանի կազմության մասին Սեբաստացին չէր էլ կարող խոսել, բացի այդ, ինչպես արդեն ասել ենք, հայ բառարանագրության նախընթաց վիճակը բացարձակապես հիմքեր չէր տալիս նման բառարան ստեղծելու համար: Հայ իրականության մեջ քննադիկ բառարան կազմելու մասին կարող է խոսք լինել առնվազն ՆՀԲ-ից, Հր. Աճառյանի «Արմատականից», արդի հայերենի բացատրական (Ստ. Մայխասյանցի, Էդ. Աղայանի, ՀՍՍՀ ԳԱ-ի քառաստոր ևճ), հոմանիշների, տեղանունների հինգհատորյա, դարձվածաբանական բառարաններից հետո: Նկատի ունենալով ժամանակաշրջանը և

Բառարանագրության համար սկզբունքային նշանակություն ունեցող վերո-
հիշյալ դրույթներից բացի, Աբբահայրը և նրա աշակերտները ՀՀԲ-ի առաջաբա-
նում արժարժել են լեզվական, լեզվագիտական, ոճաբանական, բառակազմական
և հարակից հարցերի լայն շրջանակ, որոնք նշված առաջաբանը դուրս են բերում
սոսկ բառարանագրության ոլորտից և նրան հաղորդում ճանաչողական մեծ նշա-
նակություն: Իհարկե, արժարժված բոլոր հարցադրումների հետ հնարավոր չէ
համաձայնվել, քանզի դրանցից շատերը կրում են ժամանակի մտայնության
դրոշմը, բայց այն ճիշտն էլ, որ, անտարակույս առկա է ներկայացված տեսակետ-
ներում, ունի բացառիկ կարևորություն: Այդ հարցադրումների մի մասը դարձյալ
առնչվում է բառարանագրությանը, մասնավորապես՝ ՀՀԲ-ի երկու հատորներում
տեղ գտած բառարաններին, իսկ մի մասն էլ բառարանագրության շրջանակնե-
րից դուրս են: Այսպես.

Ա. Ինչպես արդեն նշվել է, «Բառգիրքը» մասամբ նաև ստուգաբանական բա-
ռարան է: Բառարանում տեղ գտած ստուգաբանությունների մասին ընդհանուր
պատկերացում են տալիս առաջաբանում տեղ գտած նկատառումները: Ստուգա-
բանությունների հարցում Մխիթարը նախապատվությունը տալիս է հայերենի
հնարավորություններին: Նրա կարծիքով *կրօն* բառն առաջացել է *կրելի*-ից
(«ստուգաբանի կրումն»), *կրակը՝ կերակի*-ից, *մարդը՝ մարտի*-ից, *խոզորակը՝ խո-
զի քուտակի*-ից («որ է ձագ խոզի»), *խրախույսը՝ «խրախալի յույս»*-ից, *ծիածանը՝
«ծիր ածան»*-ից, *կոունկը՝ «կոկոսացող յունկն»*-ից (որովհետև այդ թռչուններին
հատուկ է անցնելիս «կոնչել յականջս մարդոյ»): ՆՀԲ-ն ընդունում է կրօն, կրակ,
ծիածան, խրախույս, ըստ էության՝ նաև կրունկ բառերի՝ ՀՀԲ-ում տեղ գտած ստու-
գաբանությունները և չի ստուգաբանում *մարդ* բառը: Նշված ստուգաբանությու-
ններից Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը ճիշտ են համարում *կրօն* և *կոունկ* բա-
ռերի ստուգաբանությունը, *մարդ* բառի ստուգաբանությունը, նշված լեզվաբաննե-
րից բացի, սխալ է համարում նաև Գր. Ղափանցյանը, *խրախույս*, *ծիածան*, *կրակ*
բառերը Աճառյանը համարում է չստուգաբանված, իսկ *խոզորակի*-ն չի անդրա-
դառնում ոչ ոք՝ հավանաբար այդ բառը գրաբարյան չհամարելով¹⁰:

Բ. Սերաստացին ավելի մեծ ուշադրություն է հատկացրել լեզվական առնչու-
թյուններին, ընդ որում՝ տարբերակելով այդպիսի առնչությունների երկու շերտ՝ 1)
փոխառություններ, որոնք ունեն երկու ուղղություն՝ այլ լեզուներից հայերեն և հա-
յերենից այլ լեզուներ. 2) տարբեր լեզուների համար ընդհանուր բառեր և բա-
ռածկեր: Ըստ Աբբահոր՝ հայերենը բառեր է փոխառել եբրայերենից (*զենեն, զեն,
նաւթ, շարթ, սալոսն, սարաւովթ*), պարսկերենից (*դահ, ոսահ, շիշակ, սասպար,
շահասպան, շահպալուր, շարրուան, փարախ, մահիկ, դասպ,*), արաբերենից
(*մթխալ*), հունարենից (*բրաբիոն, դիմոս, դիոս, կաթեղր, կաթողիկոս, յովր,
պրօսիտուն, սաղմոս, փոկոսիւթ, օրթի*): Բիչ չեն նաև հայերենից կատարված փո-
խառությունները: Որպես այդպիսիք՝ նշվում են *կոկորդ, կորիւն, դար, անդամ,
պրահ, լալ, լակել* բառերը, որ անցել են քաղղներենին (իմա՝ արամեերենին) և հա-
տորերենին, *աղի, բախպ, բեր, դաշպ, դրախպ, կուժ, խարբալել*, որ անցել են
պարթևերենին (իմա՝ պահլավերենին), *խաչ, մարդ, այր, ազապ, սահման, հազար,
բազուկ, բաղ, արժանի, կով, զեան, նշան* բառերը, համապատասխանաբար, *հաչ,*

իրականությունը՝ ինչպես Սերաստացին, այնպես էլ մեր հաջորդ բառարանագիրները
ճիշտ են կողմնորոշվել բառարանի տեսակի հարցում:

¹⁰ ՀՀԲ, էջ 17-18ա: Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետ՝
ՀԱԲ), Եր., հ. 2, 1973 և հ. 3, 1977: Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախա-
գրային ժամանակաշրջան (այսուհետ՝ ՀԼՊՆԺ), Եր., 1987, էջ 138: Գր. Ղափանցյան, Հա-
յոց լեզվի պատմություն. հին շրջան (այսուհետ՝ ՀԼՊՆԸ), Եր., 1961, էջ 339:

մերօր, էր, էգայօր, սէհման, հեզար, բազու, պար, էրժանի, կեամ կամ **կեմ, գիան, միշան** հնչյունափոխված տարբերակներով գործածում են պարսիկներն ու արաբները են:

Անդրադատնալով փոխառությունների հարցին՝ ինչպես է. Ադայանը, այնպես էլ Գ. Ջահուկյանը հիմնականում ճիշտ են համարում նշված լեզուներից հայերենին անցած փոխառությունների ցանկը և, ընդհակառակը, հիմնականում սխալ են համարում հակառակ ուղղվածության համարվող բառային անցումները¹¹: Ըստ ՀԱԲ-ի՝ վերոհիշյալ բառացանկից բնիկ հայկական են **կոկորդ, լալ, լա-կեյ, բեր, մարդ, կոմ, խաչ, այր** բառերը (քսանվեցից ութը), իսկ ՀԼՊՆԺ-ն հայկական է համարում նաև **կորիւն** և **աղարի(-ք)** բառերը¹²:

Սերաստացու ժամանակների համար, պատմահամեմատական լեզվաբանության ձևավորումից շուրջ հարյուր տարի առաջ, ստուգաբանությունների ճշգրտության այդպիսի համամասնությունը մեծ նվաճում պիտի համարել, և երևույթն այդ տեսանկյունից էլ գնահատում են հենց նշված գիտնականները:

Լեզվական առնչությունների հարցում առավել կարևոր է համարվում երկրորդ հարցադրումը. Սերաստացին ուշադրություն է հրավիրում հայերենում և լատիներենում ձևով ու իմաստով ընդհանուր բառերի առկայության վրա, ինչպիսիք են՝ հայ. լոյս- լատ. լուքս (**luxs**), դու-դու (**du**), նանաիրն-ինանիս (**inanis**), նաւն-նաւիս (**navis**), լուա-լաւա (**lava**), տամ-տո (**do**), տասն-տաս (**das**), են-սում (**sum**), են-ես (**es**) ևն: Իհարկէ, Մխիթարն այդ նմանությունները վերագրում է պատահականության, նրա կարծիքով դրանք չեն կարող փոխառություն լինել, «զի այսպիսիքս մայր բառք, զո՞րս որչափ և աղքատ իցէ լեզու ինչ, յինքնէ ունի»: Ինչպես այս առումով նկատել է ակադ. Գ. Ջահուկյանը, «Մխիթար Սերաստացին եղել է առաջին գիտնականը, որ դա մատնացույց է արել...»¹³:

Գ. Հայոց լեզվի գովաբանությանը կոչված տասներկու հատկանիշների շարքում Սերաստացին անդրադառնում է մի կողմից՝ հայերենի, իսկ մյուս կողմից՝ հունարենի, լատիներենի և արաբերենի ձևաբանական (=ձևակազմական) յուրահատկություններին՝ որպես օրինակ նշելով քերականական սեռի կարգի առկայությունն այդ լեզուներում և դրա բացակայությունը հայերենում. նշված լեզուների երեք բառաձևի դիմաց հայերենն ունի մեկը: Օրինակ՝ հուն. **օրթու/orthos** (ար.), **օրթի/orthi** (իգ.), **օրթն/orthon** (չեզ.), որ նշանակում են «ուղիղ» կամ լատ. **պոնուս/ponus** (ար.), **պոնայ/ponai** (իգ.) և **պոնուս/ponum** (չեզոք), որ նշանակում են «բարի»:

Ճիշտ է, ինչպես մյուս դիտարկումները, սա ևս իր ժամանակին արտահայտված պարզ նկատառում է, բայց հենց այդպիսի նախնական պարզ նկատառումներն են զարգանալով ընդլայնել ուսումնասիրողների ճանաչողության դաշտը և հանգեցրել լեզվաբանական լուրջ հետևությունների, ինչպիսիք էին, օրինակ, լեզուների հնարավոր ցեղակցության, ձևաբանական (ապա՝ նաև այլ բնույթի) ընդհանրությունների և բազմաթիվ այլ կարևոր գաղափարների առաջադրմանը մեզանից շուրջ հարյուր հիսունից երկու հարյուր տարի առաջ: Սերաստացու կողմից վերոհիշյալ երևույթի դիտարկումը կարող է համարվել լեզուների ձևաբանական կառուցվածքների զուգահրակական քննության մանրակաղապար՝

¹¹ Տե՛ս Է. Բ. Ադայան, Հայ լեզվաբանության պատմություն, Եր., հ. 1, 1958, էջ 128, Գ. Բ. Джаукян, О первых попытках применения сравнительного метода в истории армянского языкознания, «Известия» АН Арм. ССР, № 6, 1957, էջ 59:

¹² Տե՛ս ՀԼՊՆԺ, էջ 172:

¹³ Գ. Բ. Джаукян, նշվ. աշխ., էջ 58:

լեզուների ձևաբանական դասակարգման առաջին փորձերից 60-70 տարի առաջ¹⁴:

Դ. Հայագիտության մեջ առաջիններից մեկը, եթե ոչ՝ առաջինը ա) նա խոսում է նախամենարայան շրջանում ասորերեն, հունարեն և պարսկերեն լեզուներով հայ մատենագրության գոյության մասին և բ) համոզված կարծիք հայտնում նախապես գրաբարի՝ խոսակցական լեզու («բարբառ հասարակաց») լինելու մասին: Երկրորդ տեսակետի վկայությունն է գրաբարյան բազմաթիվ բառերի առկայությունը իր ժամանակի տարբեր խոսվածքներում ու բարբառներում, ինչպես՝ *աղբոր, գրմունչ, հորուպ, մարմանդ, վարունկ, բունք*՝ Կարնո կողմերում, *աղբև, աղի* (=դաս կամ գումար), *կասկամ, շրեժ, պրակ, սինչ, սերեկ*՝ Սեբաստիայում, *գոզի, եղջիւր, խեր կաթին, պժգալ, փաքաք*՝ Ալևնում, *ծուաղ, կողինջ, մոայլ*՝ Տրապիզոնում և այլն:

Ե. Լեզուների ծագման հարցում ընդունում է աստվածաշնչյան դրույթը և հայերենը համարում է բաբելոնյան խառնակությունից հետո առաջացած տասներկու մայր լեզուներից մեկը, իսկ վկայակոչելով լատին և հույն դպիրներին՝ հայերենը համարում է մարդկության առաջին՝ աստվածապարզ լեզուն, ինչպես ուրիշներն ասում են եբրայերենի մասին¹⁵: Լեզուների ծագման հարցում Ս. գրքի տեսության ընդունումը միանգամայն հասկանալի է՝ նկատի ունենալով թե՛ Սեբաստացու ժամանակը, և թե՛ հոգևոր կոչումը (մանավանդ հազիվ թե ծանոթ լիներ այլ տեսությունների), իսկ հայերենի՝ որպես նախամայր լեզվի վարկածի արժարծումը նրա կողմից ուներ լուրջ շարժառիթ. դա պայքարն էր լատինաբանության դեմ, որը լուրջ սպառնալիք էր դարձել մեր ազգային լեզվի աղճատման առումով: Հենց այդ նպատակով է Աբբահայրը հանգամանակից անդրադարձնում գրաբարի բարեմասնություններին՝ երբեմն էլ դրանք դիտարկելով այլ լեզուների համապատասխան ձևերի հետ զուգահեռի մեջ:

Ձ. Հայոց լեզվի (գրաբարի) հարստության և կատարելության վկայություններ է համարում հոմանիշների առատությունը (*արեւ, արեգ, արեգակն, արեւակն, արփի, ակն արեւու, ակն լուսոյ, լուսավոր մեծ* և այլն), բառաբարդման և ածանցման միջոցով նոր բառեր ու բառաձևեր կազմելու անսահմանափակ հնարավորությունը, «վայելչաբանութիւնը» և «պերճախոսութիւնը», որի լավագույն մոտ է համարում Գր. Նարեկացու ստեղծագործությունը («որոյ բանին իբրեւ ոսկոյ տարափ տեղացեալ ի վերայ սիգոյ քարտենի որպէս ականս լուսոյ՝ ընդելուզեալ ի նիւթ մելանի») և՛ այլն, և՛ այլն:

Է. Որպես կանոն՝ սուբյեկտիվ և՛ առավելապես կլասիցիստական պատկերացումների տիրապետության արդյունք պիտի համարել «ընտիր» և «ոչ ընտիր» բառերի տարբերակումը Մխիթարի կողմից, հատկապես որ դժվար է այդպիսի տարբերակման հետևողական սկզբունք նշելը: Այսպես, նա «ընտիր» է համարում *արփիփայալը*, քան թե *արեւակերպը, ծակորեանը*, քան *ծակորկէնը, արծաթինը*, քան *արծաթեան, յուզել զջուրս*, քան *զշարժելն* և այլն: Սակայն նաև նկատում է, որ որոշակի տեղերում, օրինակ՝ փիլիսոփայական երկերի մեջ, նախընտրելի են հենց հասարակ բառերը¹⁶:

¹⁴ Ինչպես հայտնի է, լեզուների ձևաբանական դասակարգման առաջին փորձը կատարել է Ֆ. Շլեգելը 1809թ.՝ «Հնդկացիների լեզվի և իմաստության մասին» գրքում՝ տարբերելով լեզվական երկու կառուցատիպ՝ *թեքական* և *մասնիկավոր*, իսկ երկրորդ փորձը՝ Ավգուստ Շլեգելը՝ «Նկատառումներ գրականության մեջ պրովանսալերեն լեզվի մասին» գրքում՝ տարբերակելով լեզուների 3 կառուցատիպ՝ *թեքական, մասնիկավոր, անձև*:

¹⁵ Տե՛ս ՀՀԲ, էջ 15ա:

¹⁶ Նշվ. աշխ., էջ 13ա:

«Բառգրքի» երկրորդ հատորում տեղ գտած բառարանները ևս շարադրվել են նույն սկզբունքներով, ինչպես որ առաջին հատորը՝ գրաբար լեզվի բառարանը, իհարկե, նկատի առնելով յուրաքանչյուր բառարանի առանձնահատկությունը: «Բառգրքի» երկու հատորների դերը հայ բառարանագրության մեջ չափազանց մեծ է ոչ միայն որպես ինքնին արժեքներ, այլև որ բառարաններից յուրաքանչյուրը դարձել է բառարանագրության որոշակի տեսակի (բացատրական, ստուգաբանական, երկլեզվյան, անձանունների և տեղանունների) արժեքավոր նախօրինակ:

Ինչպես վկայում են ուսումնասիրությունները, սկզբունքների կիրառման առումով ՀՀԲ-ին են հետևել նաև ՆՀԲ-ի հեղինակները, իհարկե՝ այդ սկզբունքների գործադրումը հասցնելով որակապես նոր՝ ավելի բարձր աստիճանի: ՀՀԲ-ին հաջորդած շրջանում հայտնաբերված նոր մատյանների բառային նյութի ուսումնասիրության միջոցով նրանք ոչ միայն զգալիորեն ընդլայնել են գրաբարի բառացանկը (ըստ Ռ. Ղազարյանի՝ 46. 580 բառ, առանց դարձվածքների ու կայուն բառակապակցությունների, իսկ ըստ Հ. Աճառյանի՝ 51. 400 բառ)¹⁷, այլև նոր քննությանը ենթարկել են ՀՀԲ-ի բառացանկը՝ Նոր հայկազյանից դուրս թողնելով դրանց մոտ 15%-ը, իսկ գլխաբառերի թիվն ավելացնելով շուրջ 42%-ով¹⁸, ինչպես նաև բառահոդվածները ներկայացրել ավելի խորը, հարուստ մշակվածությամբ և բնագրային վկայություններով: Համեմատության համար կարելի է ներկայացնել *ազմուկ*, *լեզու* և *քարպէտ* բառերի մեկնաբանություններն ըստ ՀՀ և ՆՀ բառարանների՝ բաց թողնելով, մասնավորապես, երկրորդի օտար համարժեքները և հեղինակային (=աղբյուրային) գործածությունները, որ բավականին շատ են: Այսպես՝

ՀՀԲ

Ազմուկ-մկի, աւ, ագ, օք // ամբոխումն, կամ վրդովումն կամ խոտվութիւն և կամ շփութութիւն: Ռանկ. ևս աղմուկ, կամ վէլվէլէ...

Լեզու-ուի, ոյ, աւ, ագ, օք // է անդամ ինչ փափուկ ի բերան կենդանոյ, որ ի մարդն լինի գործիք խոսելոյ... Իսկ մերք նշանակէ զբարբառն ազգի կամ մարդոյ և ըստ այսմ մինչ ասի՝ ի լեզուս խօսիլ կամ լեզուս խօսիլ, իմանի լեզուօք և բարբառով օտար ազգի խօսիլ... Եւ մերք զգանազան բարբառ ունող ազգին լեզուք կոչեն... Իսկ ի շարակնոցի՝ ուր ասի՝ ընդ հրեղեն լեզուաց, իմանի ասել ընդ հրեղեն փառաբանաց, որք բարբառին զգովութիւնս: Ընդ այսմ իմանի՝ մինչ ասի՝ հրեղեն բերանք:

ՆՀԲ

Աղմուկ-մկի, աւ, ագ կամ ից. և ոյ, ով... խառնակութիւն, շփութութիւն, ամբոխումն, խոտվութիւն. ապստամբութիւն, վրդովումն իբր այեօք և աղաղակաւ. իրար անցում. գարըշըզըզ, վէլվէլէ, անապապա կիւնի, իզդիրապ, իխթիլալ...

Լեզու - գուի, աւ, ագ, օք կամ գուայ, ով, ոց, ովք... (լծորդ գտանին ընդ հյ. և եքր. *լաշօն* բաղդ. *լիշան* ար. *լիսան*, *լուզէթ* յի. ղլօ՝սսա լտ. *լինկուա*): Անդամ փափուկ ի բերանի՝ գործի ճաշակման խօսելոյ. *փիշ գեպան*.

Լեզու - որպէս բարբառ *լիսան*... կամ Այլևայլ բարբառք, և շնորհք խօսելոյ յայլ լեզուս... Եւ ազգք և ազինք՝ խօսողք յայլևայլ բարբառս...

Լեզու - Բանն բարբառեալ լեզուաւ... Եւ անձն խօսող...

Լեզու - Որպէս ծայր իրաց, որ և Շուրթն ասի...

¹⁷ Տե՛ս Ռ. Ս. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 96:

¹⁸ Այս մասին տե՛ս Գ. Կ. Գասպարյան, նշվ. աշխ., էջ 127:

Քարտե-տիսի, իւ, ից, իք //
ծագի ի յունական բառէս քարթիս,
և նշանակէ, թուրք, յորոյ վերայ
գգիր գրեմք...

Քարտե-տիսի, ից, ագ. քարդա. քար-
դուլա... Թուրք կամ մագաղաթ, յորոյ վե-
րայ լինի գրել. թերթ գրոց. գիր ողջունի.
նամակ. հրովարտակ, յետկար, գիրք. մա-
տեան...:

Իհարկե, երեք բառի համեմատությամբ հնարավոր չէ ամբողջական պատկե-
րացում կազմել այդ երկու բառարանների առանձնահատկությունների և արժա-
նիքների մասին, սակայն մի քանի կարևոր նկատառում, այնուամենայնիվ, հնա-
րավոր է անել: Դրանք են՝ 1) երկու բառարանները, ըստ էության, սկզբունքային
հակասություններ չունեն բառերի մեկնաբանության հարցում. տարբերություննե-
րի առկայության դեպքում գերադասելի է ՆՀԲ-ի բացատրությունը՝ որպես ավելի
հավաստի. 2) ՆՀԲ-ում բառերի իմաստային կիրառություններն ավելի շատ են,
քանզի նրանում անհամեմատ մեծաթիվ աղբյուրներ են ներգրավված, որոնց զգա-
լի մասը հայտնի չէին ՀՀԲ-ն կազմելիս. դրա վկայությունն են նաև մեծաթիվ օրի-
նակները «Նոր բառգրքում» (ընդ որում՝ դրանց թիվը վեց անգամ ավելի շատ է ե-
ղել ձեռագրային տարբերակում). 3) ի տարբերություն ՀՀԲ-ի, որը ոչ միշտ է տա-
լիս գլխաբառի օտար համարժեքը, իսկ եթե տալիս է, հիմնականում՝ թուրքերենը,
ՆՀԲ-ն, որպես կանոն, նշում է հունարեն, լատիներեն և թուրքերեն համապատաս-
խանները, երբեմն նաև եբրայերեն, արաբերեն, քաղղեերեն ևն, ուստի այդ իմաս-
տով այն նաև բազմալեզվյան (3-4) թարգմանական-բացատրական բառարան է.
4) ինչպես ՀՀԲ-ն, ՆՀԲ-ն ևս միայն մասնակիորեն է ստուգաբանական բառարան,
ընդ որում՝ ՀՀԲ-ի ստուգաբանությունների նկատմամբ վերաբերմունքը միանշա-
նակ չէ. որոշ դեպքերում «Նոր բառգրքի» հեղինակները բաց են թողնում ՀՀԲ-ի
ստուգաբանությունները, ինչը նշանակում է, որ չեն ընդունում, որոշ դեպքերում
ստուգաբանություն են առաջարկում ՀՀԲ-ում չստուգաբանված բառերի համար,
բայց ավելի հաճախ ընդունում են Հին հայկազյանի ստուգաբանությունները. 5)
բառարանակազմության սկզբունքների առումով, ինչպես արդեն նշվել է, ՆՀԲ-ի
հեղինակները հետևել են ՀՀԲ-ին:

Հիրավի, նշված և այլ արժանիքների շնորհիվ ՆՀԲ-ը համարվում է հայ բա-
ռարանագրության գլուխգործոցներից մեկը: Ավելին՝ այն կարող է դասվել հա-
մաշխարհային բառարանագրության լավագույն օրինակների շարքը: Այդ առու-
մով դժվար է գերազնահատել ՀՀԲ-ի դերը՝ որպես գիտականորեն բարձրարժեք
նախօրինակ ու բառարանագրական սկզբունքների և չափորոշիչների ուղեցույց:

Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի» երկրորդ հրատարակու-
թյան առիթով ակադ. Է. Աղայանը գրել է. «Չպետք է մոռանալ, որ «Արմատական
բառարանը» արտացոլում է որոշակի ժամանակաշրջանի ստուգաբանություննե-
րի մակարդակը, ուստի և՛ սպառնիչ լինելով այդ ժամանակաշրջանի համար, չի
կարող սպառնիչ լինել մեր օրերի համար»¹⁹: Իրավամբ, նույնը կարելի է ասել Հին
հայկազյան բառարանի համար. «չպետք է մոռանալ», որ այն ստեղծվել է մեզա-
նից ավելի քան 250 տարի առաջ, երբ դեռևս չկային լեզվաբանական, այդ թվում՝
բառարանագրական, մեզ հայտնի գիտական մեթոդներն ու տեսությունները: Այն
վիթխարի կաղնի էր լայնարձակ բացատում:

¹⁹ Է. Աղայան, Լեզվաբանական հետազոտություններ. Եր., 2003, էջ 203:

В. З. ПЕТРОСЯН - *Словарь древнеармянского языка и вопросы теории лексикографии*. - "Словарь древнеармянского языка" М. Себастици, в научном кругу известный под названием Старый армянский словарь (САС), рассматривается в статье параллельно с непосредственно предшествующими и последующими словарями, в частности, со словарем Е. Мегреци и с Новым армянским словарем. Показано, что САС - первый научный словарь в истории армянской лексикографии. Применяемые в САС принципы и параметры, подробно изложенные в предисловии к словарю, стали вехой для всей последующей армянской лексикографии. Это признали и авторы Нового армянского словаря (НАС). Основываясь на суждениях об общих лексикографических принципах знатока лексикографии акад. Л. В. Щербы, автор показывает, что САС можно рассматривать и в свете общих лексикографических основ как один из лучших словарей своего времени. Более чем 250 лет тому назад, когда еще не были выработаны теории и методы современного языкознания, в том числе и лексикографии, М. Себастици создал словарь-памятник, и сегодня представляющий научный интерес для исследователей.